ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, ԳԵՂԱՄ ԲԱԴԱԼՅԱՆ. Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920–1930-ական թվականներին, *Երևան, Զանգակ, 2015, 160 էջ + 4 էջ ներդիր + 2 քարտեզ:*

Վերջերս ընթերցողի դատին հանձնվեց գիտաքաղաքական առումով հույժ արդիական կոլեկտիվ մի աշխատանք, որը պատասխան է տալիս հայ ժողովրդին հուզող ու ցավ պատճառող մի խնդրի՝ Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի 1920–1930-ական թվականների տարածքային կորուստների հարցերին: Աշխատության արդիականությունը նաև այն է, որ հեղինակներին հաջողվել է հիմնավորել այն իրողությունը, որ մերօրյա Արցախյան ազատագրական պատերազմի արդյունքում հայության կողմից ազատագրված հայկական տարածքների մի մասը խորհրդային տարիներին անարդարացիորեն էին բռնակցվել Խորհրդային Ադրբեջանին: Ուստի, իրավացի են ուսումնասիրության հեղինակները, որ գիրքը հասցեագրում են ոչ միայն պատմաբաններին, այլև պետական գործիչներին, դիվանագետներին ու քաղաքագետներին:

Պատմականորեն ստացվել է այնպես, որ Հայք-Հայաստան աշխարհը վերջին երկու հազարամյակի ընթացքում շարունակ կրել է տարածքային կորուստներ: Նվաճվել, մասնատվել ու բզկտվել են երբեմնի ավելի քան 300 հազար կմ² տարածք զբաղեցնող հայկական նահանգները՝ ներկայումս հայությանը բաժին թողնելով միայն դրա մի փոքր մասը:

Խորհրդային Հայաստանի տարածքային կորուստները սկսվեցին Մոսկվայի և Կարսի 1921 թ. ոչ օրինական պայմանագրերով: Ցավալին այն է, որ խորհրդային հետագա տարիներին էլ՝ սահմանների հստակեցման, ջրօգտագործման, քոչի, անտառների և այլ պատճառաբանությունների անվան տակ պարբերաբար յուրացվել են Հայաստանի տարածքները հարևան խորհրդային երկու հանրապետությունների կողմից: Խոսքը վերաբերում է ՀՍԽՀ Զանգեզուրի, Դիլիջանի, Լոռու գավառների մեջ մտնող տարածքները ադրբեջանական և վրացական սահմանակից շրջաններին կցելու գործընթացներին: Դա դեռ բավական չէ, ներքին բռնազավթումների գործողություններ են իրականացվել նաև բուն ԼՂԻՄ-ի սահմանների մեջ մտնող տարածքների նկատմամբ, երբ սահմանային

«ճշգրտումների» անվան տակ առանձին հոդատարածքներ կտրվել ու կցվել են Խորհրդային Ադրբեջանի արհեստածին ստեղծված շրջաններին: Եվ այդ ամենը ամբողջ 1920–1930-ական թվականներին կատարվել է ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կավբյուրոյի, Անդրերկրկոմի, Անդրկովկասյան դաշնության ԿԳԿ-ի ու դրանց տարբեր հանձնաժողովների որոշումներով ու թողտվությամբ, հիմնականում վրաց և ադրբեջանական իշխանությունների շահերին համապատասխան: Ահա այս հարցերի լուսաբանմանն է նվիրված հեղինակային խմբի պատրաստած սույն ուշագրավ ուսումնասիրությունը: Խնդրի արծարծումը հույժ արդիական է՝ հաշվի առնելով, թե ներկայումս տարածաշրջանային ինչպիսի խնդիրների ու մարտահրավերների առաջ ենք կանգնած, էլ չխոսելով այն հակամարտության ու դե ֆակտո պատերազմի մասին, որն ընթանում է՝ արցախյան խնդրի հետ կապված:

Սույն ուսումնասիրությունը նորույթ է մի շարք առումներով.

ա) ամենից առաջ աշխատության հեղինակներն ի հայտ են բերել և շրջանառության մեջ դրել հիմնահարցին վերաբերող վավերագրեր, պաշտոնական, փաստագրական նյութեր, որոնք մինչ այդ անհայտ կամ ստվերում են եղել: Թեման կատարելիս հետազոտական խումբը չի սահմանափակվել միայն Հայաստանի արխիվներով, այլ ուսումնասիրել է նաև Վրաստանի ազգային արխիվում պահվող Անդրդաշնության ԿԳԿ-ի, Ժողկոմխորհի և այլ ֆոնդեր ու հայտնաբերել հիմնահարցին առնչվող արժեքավոր արխիվային փաստաթղթեր: Օգտագործվել են նաև ԼՂՀ պետական արխիվում (Ստեփանակերտ) պահվող վավերագրերը: Ընդ որում՝ եղած վավերագիր ու վիճակագրական տվյալներն ի մի են բերված, տարածքային կորուստները հաշվարկված են ու քարտեզագրված, որոնք էապես բարձրացնում են հետազոտության գիտական նշանակությունը: Այս տեսակետից աշխատության հեղինակները դիմել են ոչ թե մերկ քարոզչական հնարքի, ինչը բնորոշ է թուրք-ադրբեջանական քարոզչամեքենային, այլ կոնկրետ փաստերով, պաշտոնական որոշումներով, թվական տվյալներով ներկայացրել են Հայաստանի տարածքային կորուստները, ցավոք, արդեն խորհրդային ժամանակաշրջանում, բռնազավթված առաջին հերթին Թուրքիայի կողմից: Հեղինակային խումբը փաստավավերագիր հարուստ նյութերի հիման վրա արձանագրում է, որ բավական չէ, որ Մոսկվայի 1921 թ. և դրանից բխող Կարսի պայմանագրերով Հայաստանը նշանակալի տարածքային կորուստներ ունեցավ, դրան գումարվեց Անդրկովկասի երեք հանրապետությունների սահմանագծի հստակեցումների ժամանակ ի վնաս Հայաստանի թույլ տված տարածքային կորուստներն այն դեպքում, երբ դրանք խորհրդային պետության ներքին տարածքային խնդիրն էր և որևէ կապ չուներ ո՛չ Թուրքիայի և ո՛չ էլ օտար որևէ պետության միջամտության հետ:

բ) Աշխատության նորույթ բերող արժանիքներից մյուսն այն է, որ հեղինակային խումբն ամփոփել է ամբողջ 1920–1930-ական թվականների սահմանային «ճշգրտումների», ավելի ճիշտ սահմանային ձևախեղումների գործընթացն իր ամբողջության մեջ, մի խնդիր, որ մինչ օրս վրիպած է եղել հետազոտողների տեսադաշտից: Հայտնի է, որ Հայաստանի նկատմամբ սահմանային ձևախեղումներ կատարվել են նաև խորհրդային հետագա տասնամյակներին, ընդհուպ մինչև 1970-ական թվականները՝ այդ թվում նաև հայ-թուրքական սահմանների հետ կապված, որոնք, կարծում ենք, կարելի է նույնպես առանձին հետազոտության նյութ դարձնել:

Հասկանալի է, որ խորհրդային տարիներին, ի թիվս բազում հիմնահարցերի, չէր խրախուսվում ո՛չ հայ-թուրքական և ո՛չ էլ «եղբայրական երեք հանրապետությունների» միջև տարածքային-սահմանային վեճեր հատուցող թեմաների ուսումնասիրությունը: Եվ դա մեզանում հնարավոր եղավ միայն Հայաստանի անկախ պետականության վերականգնումից հետո:

գ) Աշխատության գիտական արժանիքներից է այն, որ հեղինակները հավասարապես համադրել և իրար են զուգորդել խնդրո թեմայի տարածքային-սահմանային հարցերի վերաբերյալ և՛ պատմական հարուստ նյութը (հաճախ սկսած ցարիզմի ժամանակներից), և՛ փաստական ու վիճակագրական տվյալները, և՛, վերջապես, դրանց համադրման հիման վրա կատարել համապատասխան հաշվարկներ ու հանգել գիտականորեն հիմնավոր ու համոզիչ եզրակացությունների:

Խնդրի քննությունը սկսվում է Երևանի 1920 թ. դեկտեմբերի 2-ի Դրո–Լեգրան համաձայնագրից, այսինքն՝ Հայաստանի պաշտոնապես խորհրդային հռչակելու օրից, որի 3-րդ հոդվածի համաձայն՝ հետազոտության հեղինակների կատարած մանրազնին հաշվարկներով Խորհրդային Հայաստանի մեջ ընդգրկվող տարածքները պետք է կազմեին ավելի քան 43 հազար կմ² (տե՛ս էջ 18):

Այնուհետև կանգ են առել մեր ժողովրդի համար, թերևս, ամենակորստաբեր 1921 թ. Մոսկվայի և դրա հոգեզավակ Կարսի պայմանագրերին ու դրանց արդյունքով ՀՍԽՀ տարածքային մեծ կորուստներին: Ստացվել է այնպես, որ բոլշևիկյան Ռուսաստանը հանուն իր աշխարհաքաղաքական հեռագնա շահերի, ըստ էության, թիկունք չկանգնեց թուրք-հայկական պատերազմում ծանր պարտություն կրած թույլ և անօգնական Հայաստանին ու հայ ժողովրդին և Մոսկվայի ռուս-թուրքական անօրինական պայմանագրով գործնականում վերահաստատեց քեմալականների կողմից հայկական բնիկ տարածքների բռնազավթումները՝ հայ-թուրքական սահմանագիծ դարձնելով Ախուրյան և Արաքս գետերը: Միջազգային իրավունքի կոպիտ խախտմամբ, առանց Հայաստանի

պատվիրակության գիտության ու մասնակցության, գծվեց հայ-թուրքական պետական սահմանը:

Մոսկվայի ռուս-թուրքական «բարեկամության և եղբայրության» պայմանագրով հայ ժողովրդի համար աղետալի կորուստը ոչ միայն Թուրքիային հանձնվող Կարսի, Արդահանի, Սուրմալուի շրջաններն էին, այլև թուրքերի պահանջով պայմանագրում ամրագրված 3-րդ հոդվածը՝ 5,5 հազար կմ² կազմող Արաքսի ձախափնյակի՝ Նախիջևանի երկրամասի հովանավորությունն անվերապահ իր փոքր եղբայր Ադրբեջանին հանձնելը, որի հաջորդ քայլը պետք է դառնար Կարսի պայմանագրով դրա կցումը Խորհրդային Ադրբեջանին:

Գրախոսվող աշխատության մեջ հեղինակները մեկ առ մեկ արձանագրում են հայկական բնիկ տարածքների կորստյան փաստերը: Գրքում արձանագրված է, որ միայն Մոսկվայի պայմանագրով Թուրքիային և Ադրբեջանին անցած հայկական տարածքները կազմել են ավելի քան 25 հազար կմ² (էջ 21): «Այսպիսով,– եզրահանգում են հեղինակները, – ռուս-թուրքական «դավադիր գործարքով» Հայաստանից խլվեց և Թուրքիային ու Խորհրդային Ադրբեջանին նվիրաբերվեց հայկական տարածքների մի զգալի մասը, խախտվեցին և ոտնահարվեցին միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները» (էջ 21):

Վերոնշյալները Խորհրդային Հայաստանի տարածքային մեծ կորուստներն էին: Շուտով դրան հետևեցին սահմանների «ճշգրտման» անվան տակ Խորհրդային Հայաստանի տարածքների փոքր ու մեծ կտրատումները՝ հօգուտ Ադրբեջանի և Վրաստանի: Մասնավորապես հետազոտողների տեսադաշտից դուրս չի մնացել այն ժամանակների հայ-վրացական հարաբերությունների կնճիռ համարվող Լոռիի և Ջավախքի խնդիրը: Չնայած այդ խնդրին եղել են անդրադարձներ՝ սկսած Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Արշ. Ջամալյանից և վերջացրած ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Մելքոնյանով, բայց և այնպես Հայաստանի սահմանային–տարածքային հիմնահարցերն ամբողջացնելու հրամայականով հետազոտական խումբը կանգ է առել նաև այդ խնդրին: Հավուր պատշաճի ընդգծված է Լոռու չեզոք գոտու Հայաստանին վերադարձման գործում Խորհրդային Ռուսաստանի օժանդակությունը, ինչը բացատրվում է ոչ այնքան Հայաստանին լավություն անելու հանգամանքով, որքան նրանով, որ Լոռին հանդիսացել է Վրաստանը խորհրդայնացնելու կարևոր երթուղիներից մեկը: Սա, անշուշտ, կարելի է համարել Կարմիր բանակի օգնությամբ ՀՍԽՀ եզակի ձեռքբերումներից մեկը:

Այդուհանդերձ, ուսումնասիրության արդյունքում աշխատության հեղինակները հանգել են այն ընդհանուր եզրահանգման, որ Անդրկովկասյան հանրապետությունների միջև տարածքային–սահմանային խնդիրների հստակեցման հարցում ակներև դրսևորվել է կենտրոնական իշխանությունների, մեղմ ասած,

ոչ հայաստանանպաստ կեցվածքը: Գրքում ցույց է տրված, որ այն, ինչը հաջողվեց անել Լոռու հարցում, այն էլ ոչ լիարժեք, նույնը, ցավոք, չիրագործվեց գերակշիռ հայությամբ Ախալքալաքի և Ծալկայի (Խրամի) շրջանների հարցում: Միաժամանակ գրքի հեղինակները նկատել են տալիս, որ առհասարակ հայկական տարածքների կորստյան գործում ինչ-որ չափով իր դերն է խաղացել Հայաստանի իշխանությունների պասիվ պահվածքը:

Շատ ավելի խնդրահարույց էր հայ-ադրբեջանական սահմանազծումների հարցը: Արխիվային վավերագրերի, կառավարության դեկրետների և կուսակցական որոշումների շրջանառմամբ ցույց է տրված, որ էապես խախտվել է Երևանի 1920 թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրով Խորհրդային Հայաստանին միացվելիք Ելիզավետպոլի նախկին նահանգի ոչ միայն Զանգեզուրի գավառի տարածքը, այլև տիրել է անորոշություն նույն նահանգի Ղազախի գավառի գյուղերի ու հողատարածքների սահմանների հարցում: Դրան հետևել են ոտնձգություններ, որպես կանոն, հայկական տարածքների նկատմամբ: «Արդյունքում, եթե դեկտեմբերի 2–ի համաձայնագրով ՀՍԽՀ տարածքը, ինչպես նշվել է, պետք է կազմեր մոտ 43070,4 քառ. կմ, ապա արդեն 1921 թ. վերջին – 1922 թ. սկզբին տատանվում էր 32000–33000 կմ²–ի սահմաններում՝ կրճատվելով ավելի քան 1/4–ով» (էջ 54):

Սա դեռ բոլորը չէ: Հետազոտական խմբի դարձյալ հարուստ ու հիմնավոր փաստական ու վիճակագրական տվյալների, քարտեզագրական համոզիչ պատկերագրումների և դրանց հիման վրա կատարած գիտական եզրահանգումներով ցույց են տրված, որ ՀՍԽՀ տարածքային կորուստները կրել են շարունակական բնույթ, այսինքն՝ շարունակվել են նաև Անդրկովկասյան դաշնության (1922–1936 թթ.) ժամանակաշրջանում և դրա արդյունքում, ի վերջո, ՀՍԽՀ-ն պարփակվեց ընդամենը շուրջ 29.8 հազար կմ² տարածքի վրա, այսինքն՝ այն, ինչ որ ունի Հայաստանի մերօրյա հանրապետությունը:

Նման ճանապարհով Հայաստանին չմիացվեց Առաջին հանրապետության շրջանում հայկական իշխանության իրավասության տակ գտնվող Զնանշիրի գավառի Ալ լճերի շրջանը, ոտնձգություններ կատարվեցին Սյունիքի Շուռնուխի անտառային գոտու նկատմամբ, ստեղծվեց «Կարմիր Քրդստան» անվանումով արհեստածին վարչական միավոր և այլն: Միանգամայն իրավացի են հետազոտության հեղինակները, որ «ՀՍԽՀ տարածքների և սահմանների որոշման հարցում բոլշևիկյան Ռուսաստանը չպաշտպանեց Խորհրդային Հայաստանի և հայության շահերը»: Աշխատության մեջ կարմիր թելի պես անց է կացվում այն տեսլականը, որ ամբողջ 1920–1930-ական թվականներին Անդրկովկասյան երեք «եղբայրական» հանրապետությունների հողային վեճերը, տա-

բածքային սահմանագծումները, որպես կանոն, կատարվել են հայկական տարածքների կորստի հաշվին:

Թող զարմանալի չթվա, որ խորհրդային բարձր իշխանությունները նույն կերպ են վարվել նաև Լեռնային Ղարաբաղի հարցում: Աշխատանքում ցույց է տրված, որ տարածքային–սահմանային կտրատումներ են կատարվել ԼՂԻՄ-ի սահմանների նկատմամբ: Ընդ որում՝ 1923 թ. ամռանը ԼՂԻՄ-ի ձևավորման ժամանակ ինքնավարություն է տրվել ոչ թե ամբողջ Լեռնային Ղարաբաղին, այլ միայն «Լեռնային Ղարաբաղի հայկական մասին» (էջ 125): Պարզվում է, որ Լեռնային Ղարաբաղից առանձնացվել են որոշ տարածքներ, որոնք ընդգրկվել են Աղդամի, Ջաբրայիլի և Քրդստանի ադրբեջանական գավառներում: Ավելին, մինչ այդ Ադրբեջանի իշխանություններն անգամ տրամադիր չեն եղել կյանքի կոչելու ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կավբյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի անօրինական տխրահռչակ որոշումը, մի որոշում, որի վերաբերյալ Հայկոմկուսի Կենտկոմը համարձակություն է ունեցել արձանագրել, որ Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի սահմաններում թողնելու մասին Կավբյուրոյի հուլիսի 5-ի որոշումը «իրենց չի բավարարում»: Ի պատիվ հետազոտության հեղինակների՝ իբրև նորույթ փաստերով ցույց է տրված, որ ուղիղ երկու տարի՝ 1921 թ. հուլիսի 5-ից մինչև 1923 թ. հուլիսի 7-ը, ադրբեջանական կողմը ձգձգել է ինքնավար մարզի ձևավորումը՝ հույս ունենալով հայկական այդ շրջանները տարալուծել Ադրբեջանի վարչատարածքային համակարգում ու դրանով արագացնել երկրամասի հայաթափման գործընթացը: Ընթերցողի համար նորույթ է նաև այն, որ գրքում հաշվարկներ են կատարված Լեռնային Ղարաբաղի երկրամասի վերաբերյալ, որը կազմել է շուրջ 8000 կմ² (էջ 130): Հեղինակների կարծիքով՝ ԼՂԻՄ-ի տարածքն իր գոյության առաջին տարիներին կազմել է շուրջ 5000 կմ² (էջ 135): - Բայց այստեղ էլ նրա տարածքներն արհեստական վերաձևումների արդյունքում կրճատվել են՝ հետագայում կազմելով ընդամենը 4400 կմ² (էջ 142): Դա դեռ բավական չէ, կատարվել է ևս մեկ չարամիտ գործողություն: Բանն այն է, որ «Կարմիր Քրդստան» վարչամիավորի 1929 թ. վերացումից հետո ԼՂԻՄ-ը «Լաչինի միջանցքով» ամբողջությամբ մեկուսացվեց Խորհրդային Հայաստանից՝ վերածվելով Ադրբեջանի ներքին «կղզյակի» (անկլավի):

Այսպիսով՝ հանրագումարի բերելով վերոշարադրյալը՝ կարելի է եզրակացնել, որ Կարսի մարզի և Սուրմալուի գավառի բռնազավթումը Թուրքիայի կողմից, Նախիջևանի ու Լեռնային Ղարաբաղի բռնակցումը Ադրբեջանին, մյուս կողմից՝ առանց այն էլ անդամահատված Խորհրդային Հայաստանի առանձին հողամասերի «ճշգրտումների» անվան տակ յուրացումները հարևան հանրապետությունների կողմից՝ այդ ամենը տասնամյակների ընթացքում հայ ժողովրդի մեջ կուտակված այն պայթուցիկ նյութն էր, որն օրինաչափորեն

պետք է բռնկվեր Արցախյան ազատամարտի ձևով՝ կեղծիքը պատռելու, պատմական, անարդարությունը վերականգնելու հրամայականով: Սույնով գրքի հեղինակները պատմական, վավերագիր-փաստական հաշվարկներով ու հիմնավորումներով գալիս են մեկ անգամ ևս վերահաստատելու մեր ժամանակներում հայ ժողովրդի արդար պայքարի իրավացիությունը՝ Հայոց 10-րդ նահանգ Արցախ աշխարհի՝ Մայր հայրենիքին վերամիավորելու, իսկ իբրև հաջորդ քայլ՝ չեղարկելու Մոսկվայի 1921 թ. և նրա նմանակ Կարսի՝ ուժով պարտադրված, միջազգային իրավունքի տեսակետից ապօրինի պայմանագրերը և վերականգնելու համայն հայության պատմական-քաղաքական օրինական իրավունքները Կարսի, Սուրմալուի, հայոց խորհրդանիշ՝ Արարատի նկատմամբ:

Աշխատությունն ամփոփվում է հետևյալ խորիմաստ պարբերությամբ. «Այսպիսով, 1920–1930-ական թվականներին կրած տարածքային-սահմանային կորուստների արդյունքում ԼՂԻՄ-ը, Խորհրդային Հայաստանը և նրա իրավահաջորդը հանդիսացող Հայաստանի երրորդ հանրապետությունը հայտնվեցին ռազմավարական տեսակետից աննպաստ պայմաններում: Եվ միայն Արցախյան ազատագրական պատերազմում հայության հերոսական հաղթանակների շնորհիվ է, որ ազատագրվեցին խորհրդային տարիներին Ադրբեջանին բռնակցված հայկական տարածքների զգալի մասը: Դրանք այսօր կազմում են ԼՂՀ-ի (Արցախի Հանրապետություն) անբաժան մասը» (էջ 144):

Վերջում, իբրև ցանկություն, հաշվի առնելով քննարկվող թեմայի արդիականությունը և գիտագործնական ու քաղաքական կարևորությունը՝ կուզենայինք սույն աշխատանքը տեսնել հրատարակված օտար լեզուներով (ռուսերեն և անգլերեն): Հիշեցնենք նաև, որ սույն հետազոտական թեման հաջողությամբ քննություն էր բռնել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից անցկացված գիտահետազոտական մրցույթում, և աշխատանքն իրականացվել է նրա շրջանակներում:

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ